Գիրքը **լուսապատճենվել** և համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորի կողմից սիրված Գրքամոլ-ը սկսել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ինչ-ինչ պատճառներով ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությանը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ և օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող այս հանրօգուտ գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com էլ. հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ԿԱՐԻՆԵ ՇԻՐԱԿ

ՍԻԱՅՆԱԿ ԳԱՅԼ

ԵՐԵՎԱՆ ՊԵՏՀՐԱՏ

ԳՄԴ 66.3(22)
Շ - 642

Խմբագիր՝ Հովիկ Կարապետյան

ՇԻՐԱԿ ԿԱՐԻՆԵ
Շ-642 Կարինե Շիրակ, Միայնակ գայլ / խմբ. Հ.Ֆ.Կարապետյան, - Գյումրի: Դպիր, 1997, 26 էջ

«Երդվյալ անմահներ»-ը ազգային ազատագրական պայքարի «հանրագիտարանի» էջերից մեկն է, որն իր մեջ ներառում է արցախյան ազատամարտի ընթացքում զոհված կամավորականների կյանքն ու գործունեությունը:
Յուրաքանչյուր գրքույկ պատմելու է մեկ ազատամարտիկի մասին:

Շ. $\frac{0801000000}{792\ (01)\ 97}$ չհայտարարված ԳՄԴ - 663 (2Հ)

© Շիրակ, Կ., 1997

Հեղինակի կողմից

Երդվում եմ կյանքիս ավետարանին,
Որ չե՛մ լռելու, թե լեզուս էլ տամ,
Որ չե՛մ դրժելու իղձս հայապաշտ
Եվ չե՛մ հանելու խաչը իմ սրտից:
Երդվում եմ սրտիս ավետարանին,
Չե՛մ ուրանալու ազգիս վերքերը,
Երդվում եմ Ազգի՛ս Ավետարանին՝
Սիրտս կխաչե՛մ Հայոց Սուրբ Հողի՛ն:

ԿԱՐԻՆԵ ՇԻՐԱԿ

ОДИНОКИЙ ВОЛК

1962 թվականի ապրիլի 29-ն էր, և Աստված օրհնեց այդ օրը՝ բարին ավետելով:

Խաչատրյանների տոհմածառը ավելացավ ևս մի ճյուղով՝ արու զավակ էր, ընտանիքի երրորդ երեխան և մկրտվեց Սամվել անունով:

Նա անհնազանդ էր, չէր հանդուրժում բարուրի կապանքները և հնարավորության դեպքում իրեն ազատություն էր տալիս:

Ի՞նչ սպասումներից ծնվեցիր և ի՞նչ խորհուրդ պիտի սահմաներ քո լինելիությունը, որ դեռևս 11 օրական հասակում հիվանդացար թոքաբորբով...

Աստված ոչ արասցե, եթե...· բայց դու պետք էիր քո ժողովրդին, դու ապրելու պարտավորություն ունեիր - քանզի օրհնյալ ծնունդ էիր և ճակատագիրդ քո ժողովրդին դեռ մատուցումներ ուներ քեզանով:

Մայրը՝ Գեղեցիկ Խաչատրյանը, փոքրիկին հանձնելով մոր խնամքին, շարունակեց իր աշխատանքը:

Այնուհետև Սամվելը հաճախեց տեքստիլ թաղամասում գործող թիվ 1 մանկապարտեզը, որտեղ և ձևավորվեց միշտ առաջինը լինելու իր մտածողությունը:

«Ի՞նչ ծնունդ եղար տղա», առերես կասկածանքով պիտի ասեին հարևաններն ու ծանոթները, իսկ դու անուշադիր բոլորի խոսքին օր-օրի պիտի դառնայիր ավելի ինքնասածի ու բծախնդիր:

Սիրում էիր նորություններ մատուցել քո ընկերներին՝ ցանկացած խաղի կամ միջոցառման ժամանակ որևէ արտառոց բան անելով:

Ժպտում էիր և աչքերիդ շողից թախիծ էր ցայտում, որն ուրվագծում էր տարիների հանգույցում անմահությանը խաչվելիք ապագադ:

Երբ ծնվեցիր՝
Հայոց երկնակամարում
Աստղերի պարահանդես էր,
Եվ մի փոքրիկ աստղ թռավ
Ու ծուլվեց կապույտ երկնքի հետ.
Թողնելով հետդարձի ճանապարհ
Եվ հույսի մի նշույլ:

«Աստղերը» փայլում են այն ժամանակ. երբ նրանց հոգիները ժպտում են միմյանց: Եվ երբ 1967 թվականին վարպետդերասանը այցելեց թիվ 1 մանկապարտեզ, չէր կարող չզգալ Սամվելի անհատականությունը, չընտրել նրան, թեկուզ միայն գրկելու համար: Նա լռություն էր ավետում մանկանց ժպիտներին և անհատականության վեհ զգացում:

Սամվելը մեծ դերասանի կողքին

Հենց այստեղ էր, որ պիտի ասվեր. ««Աստղը» գրկեց երկիր պահապանողին»: Ճշմարտությունը ժողովրդական է.
«Տու՛ր ինչ կարող ես, միայն թե տուր քո՛նը»:
Միեր Մկրտչյանը տվեց հայ ժողովրդին իր տաղանդն ու արվեստը, դա էր իր հոգու գանձը և չխնայեց, իսկ Սամվել Խաչատրյանը՝ իր հավատն ու կյանքը: Քանզի յուրաքանչյուր ոք յուրովի է տրվում ազգին:
Առաջին զանգի ղողանջների տակ, 1969թ. սեպտեմբերի 1-ին փոքրիկ Սամվելը մտավ դասարան: Դասասենյակում նա չէր կարողանում հարմարվել ու գտնել իր տեղը: Դրանից բացի մայրիկը նախազգուշացրել էր, որ պայուսակը պետք է դնել այնտեղ, որտեղ կասեր ուսուցչուհին, իսկ փոքրիկ Սամվելի ուսուցչուհին շատ «տարօրինակ» բնավորություն ուներ և մինչև Սամվելը

ԴՊՐՈՑՈՒՄ 1973 թ.

չհարցրեց, թե որտե՞ղ կարող է դնել իր ձեռքի պայուսակը, նա ոչինչ չասաց, իսկ այդ անորոշ վիճակը տևեց երկու դասաժամ: Դե ի՞նչ իմանար ուսուցչուհին, որ Սամվելը անում էր այն, ինչ իրեն ասում էին, սակայն... չանցած մի քանի շաբաթ Սամվելը սկսեց անել այն, ինչ իրեն դուր էր գալիս և ինչը անձամբ համարում էր ճիշտ:

Սովորում էր ըստ ցանկության, սակայն «Հայ ժողովրդի պատմության» դասաժամերը երբեք բաց չէր թողնում: Չէր կարդում, բայց գիտեր...

Սամվելի սիրելի ուսուցչուհի և դասվար Քնարիկ Կարապետյանի համար Խաչատրյանների տունը դարձավ մի սրբավայր, իսկ Սամվելը՝ միակ հպարտությունը:

Դեռևս յոթերորդ դասարանում, երբ նրանց դասարանին տրվեց գրավոր աշխատանք՝ «Հերոսները կյանքում», նա գրիչը վայր դրեց, պատճառաբանելով, որ. «Հերոսությունն ապացուցվում է գործով, ո՛չ թե խոսքով»: Իսկ հայրենասիրություն նրան ներարկել են թե՛ տանը, թե՛ դպրոցում:

Նրա արյան մեջ գերակշռում էր վրիժառության տոկոսը, իսկ էությունը պարտքի և պատասխանատվության զգացումն էր: Մեծ խղճի տեր էր և եղբայրակից թույլերին:

Հայրը՝ Սերյոժա Խաչատրյանը, կամ ինչպես համաքաղաքացիներն են ասում՝ վարպետ Սերյոժան, մանկուց էր զգացել Սամվելի տարբերությունն իր մյուս երեխաներից, իսկ այդ տարբերությունն ավելի ցայտուն ձևով էր արտահայտվել Մանիկ տատի «Մահվան խաղի» ժամանակ, երբ թոռներից յուրաքանչյուրը, տատին խոշտանգելու իր ձևն էր առաջադրել, իսկ Սամվելը սաստել էր նրանց, ասելով. «ինչ եք անում, չէ՞ որ մեր տատն է»:

Երեք ուստրեր և երեք դուստրեր էին մեծանում Խաչատրյանների ընտանիքում և ամեն եղբայր իր «բաժին» քույրն ուներ: Սամվելի «բաժին» քույրն էլ Արմինեն էր, որն էլ մեծանում էր՝ ենթակա Սամվելի քմահաճույքներին և «կանոնավոր» ծեծին: Վերջինիս «ռեժիմը» երբեք չէր խախտվում: Ստացվում էր այնպես, որ իր կատարած «ծանր հանցանքների» համար, անգամ ինքը գրեթե պատասխան չէր տալիս, Սամվելի պատասխանները նախատեսված էին այլ իրավիճակների համար:

Նրա ավագ եղբայրն՝ Արշավիրը, չէր հանդուրժում Սամվելի չարաճճիությունները, առավել ևս նրա անհնազանդ քրքիջը:

Մի օր էլ հերթական նրանց վեճը վերածվել է ծեծկռտուկի և նրանց հաշտեցնելու համար մի անծանոթ փորձել է միջամտել՝ հայհոյելով մեծ եղբորը: Սամվելը լսելով անծանոթի խոսքերն ավելի է զայրացել և սկսել հարվածներ տեղալ, բայց այս անգամ ոչ թե եղբոր, այլ անծանոթի գլխին, որն էլ Սամվելին հիմարի տեղ դնելով բղավել է. «Օո, ըսիգ խելառ է, իրա խերն ու շառը չիդե»:

Նա մանկուց էր «խելառ»: Նրա աչքերը վառվում էին, երբ ամեն անգամ լսում էր տատի գաղթի պատմությունը և ամեն անգամ երդվում...

Հայացքից անգամ զգացվում էր ներսում ալեկոծվող վրեժխնդրությունը:

Ո՞րն է ճիշտը -
Ապտակի տեղ բռունցք պարգել,
Թե՝ ապտակող ձեռքը շոյել:
Ո՞րն է ճիշտը -

Արյան դիմաց արյուն հեղել,
Թե՝ այդ հեղեղում խեղդվել:
Ո՞րն է ճիշտը -
Հայոց հղի կանանց դիմաց
- - - - - - - - - - - - - - - - - - -
Որ երդվենք հայ կույսերով:
Ո՞րն է ճիշտը ...

1979 թ-ին Սամվելն աշխատանքի է անցնում մանվածքային ֆաբրիկայում որպես բանվոր: Աշխատանքի հետ զուգընթաց պարապում է արևելյան սպորտաձևով և գերազանց տիրապետելով կարատե-դո մարզաձևին, հասարակական հիմունքներով իր գիտելիքներն է փոխանցում իր սաներին:

Նրա գիտելիքները բազմակողմանի էին, ձեռքից բաց չէր թողնում որևէ նոր բան սովորելու հնարավորությունը, որոշ բաներ փոխանցելով քույրերին:

Նա ժամանակի որոշակի սահմանում իր քույրերին պարտադրում էր, ըստ կանոնակարգի հավաքել և լիցքավորել հրացանը: Ո՞վ գիտե...

Նա հայ աղջկան նայում էր հայեցի, պարկեշտ, համեստ ու հեզ, բայց դրա հետ մեկտեղ ընդունում էր, որ հայ աղջիկը պետք է լինի թիկնապահ:

«Ճակատային կրակը մենք կառնենք մեզ վրա, դուք մեր թիկունքը պահե՛ք սիրելի քույրեր»:

Տարիները չփոխեցին Սամվելին, Մանիկ տատը միշտ պետք է իր ուշադրության կենտրոնում լիներ: Նա թե՛ կատակում, թե՛ կիսվում էր տատի հետ, ինչպես նաև՝ տատին հաճելի անակնկալներ մատուցում:

Մի օր տատին պարտադրեց փոխել հագուստը և հետևել իրեն, «որոշել էր» նրան կամուրջից վայր գցել, հագուստն էլ փոխել էր տալիս, որ դիահերձման ժամանակ ընկերների մոտ ամոթով չլինի: Եվ երբ տատը թոռան հրամանին պատրաստ նստում է մեքենան, Սամվելը նրան ուղեկցում է մինչև կինոթատրոն «Երևան» և պարտադրում տոմսավաճառին իրեն արտահերթ տոմս վաճառել.

- Տատս մեծ կին է մորաքույր, չի՝ կարող հերթ կանգնել,

տուր ես գնամ:
- Ո՞ր տատիդ հետ ես,- սկսեցին ծիծաղել ընկերները:
- Իսկական տատիս, տղեք ջան,- տատին համբուրելով ասաց Սամվելը:
Տատը ուրախությունից արտասվեց, իսկ ընկերների կատակը ջերմացավ:
- Այ Սամվել, մեր սաղ մամերի քելեխը կերար, օր մամի՞դ ծաղկեցնես:
- Տեսար, այ տատ, ինչըղ երեսով կուտան, ընձի ամոթով ես թողել,- ձևական ամոթով դարձավ Սամվելը դեպի տատը:
- Բալա՛ ջան, ես էլ չեմ ուզում, որ ամոթով մնաս, բայց որ չեմ մեռնում, ի՞նչ անեմ,- թե՛ միամտորեն, թե՛ կատակով հանգստացնում էր տատը:

Սամվել թոռան կատակն անգամ յուրօրինակ էր ու մաքուր:

Այսպես անցան ազատ տարիները և 1981 թ-ին Սամվելը զորակոչվեց խորհրդային բանակ, տատին պարտադրելով սպասել. «Տատ ջան, չմեռնես, մինչև գամ, թաղումդ հեչ մարդու չեմ վստահե»:

1983թ. նա զորացրվեց և վերադարձավ հայրենի քաղաք:

Աշխատանքի անցավ Լենինականի կապի հանգույցում, որպես կապավոր:

«Պատերազմի դաշտում
մի կապավոր զինվոր,
- - - - - - - - - - - - - - - - -
- - - - - - - - - - - - - - - - -
Ցոցում պահած մի լուռ լուսանկար»:
Գ.Սարյան

1979 թ. անառ

Այդպիսի մի լուսանկար իր քաղցր թախիծն էր թողել Սամվելի հիշողության մեջ:
Սամվելը սիրահարվել և սիրել էր մեկ անգամ, բայց արդյունքը եղել էր այն, որ նա չէր վայելել իր սիրո պտուղը. այն հասունանալով և շողարձակելով Հայաստանում, պոկվել էր ծառից՝ գլորվելով մինչև Ամերիկա:
Սամվելին թևեր էր հարկավոր սլանալու համար, բայց նրա ոտքերն արմատակալել էին հայոց հողում:
Սիրո մեջ էլ նա հզոր գտնվեց:
Ընկերները չէին կարող չհիշել գորիսցի «կժով աղջկան»: Մի աղջնակ, որի համար ֆիդայի Սամվելը սրբություն էր և մի անհասանելի երազ:

Արդյոք ինչպիսի՞ փոփոխություն էր եղել Սամվելի մեջ դեպի սերը, զգացմունքը, որ հարազատներին խոստացել էր.

- Երբ հետ վերադառնամ, ինձ հետ մի ֆիդայի աղջիկ կբերեմ՝.սպիտակ ձիով:

Սամվելի երազանքը սպիտակ ձին էր, պայքարը՝ մինչ ազատություն:

Նա իր կյանքով հումոր էր, նրա լուրջը կատակ էր, կատակը լուրջ: Մարդուն զայրացնելը նրան հաճույք էր պատճառում:

Քույրերից մեկի ամուսնության ժամանակ, երբ տղայի ծնողներն առաջարկել են տեսնել աղջկան, քույրը հրաժարվել է ներկայանալ: Զգալով ապագա փեսայի անելանելի վիճակը, Սամվելը տվել է նրան իր հրացանը, ասելով.

- Պահի՛ր վրան, թող առաջ գա,- հաստատ համոզված լինելով, որ իր քույրը ֆիդայական ոգու տեր է և հրացանից չի վախենա:

Մանկուց բծախնդիր լինելով, նա ինքն իրեն փորձում էր վերափոխել՝ կերակրատեսակ դարձնելով նաև անձրևաորդը, իսկ խղճի մասին թերևս մի բան կարելի է ասել, որ նրա հոգին ցավում էր յուրաքանչյուր հայի համար, յուրաքանչյուր թիզ հողի համար, սակայն այդ հոգին էքում էր խիղճը, երբ ոտնահարվում էին դրանք:

Նա անզիջում էր թե՛ շնագայլերի, թե՛ կատուների նկատմամբ:

Այդ արհամարհանքը չէ՞ր, որ արցախյան ժողովրդի ազատագրական պայքարն սկսվելուն պես Սամվելը ներգրավվեց շարժման շարքերը, թե՛ պայքարի ոգեկոչման, թե՛ բռնագաղթվածներին օգնելու համար:

1989թ. Գյումրիում ստեղծվեց «Ուրարտու» փրկարարական-պաշտպանական ջոկատը և Սամվելն ընդգրկվեց նրա շարքերը: Օժտված լինելով սպորտային բարձր պատրաստվածությամբ՝ Սամվելը նշանակվեց ջոկատի մարտական պարապմունքների մարզիչ՝ կարատե-դո սպորտաձևով: Նա իր հայրենասիրությամբ բարձրացնում էր ջոկատի ոգին, ինչպես նաև մասնակցում ջոկատի գործողություններին.

«Ելե՛ք, հայե՛ր քաջազուն, մարդ պետք է լինի կամ Չաուշի նման կռվող, կամ չպե՛տք է լինի: Երանի՜ այդ ճակատագրի տիրոջը»:

Աղետ տեսած Հայաստանի զավակները լսելով, որ Ցխենվալիում երկրաշարժի «սև սատանան» իր քրքիջով շենքեր է արմատախիլ անում. անմիջապես համախմբվեցին և 3-րդ օրվա առավոտյան ճանապարհ ընկան՝ իրենց հետ տանելով

առաջին անհրաժեշտության գործիքներ և դեղորայք:

1990թ. որոշվեց «Ուրարտուն» դարձնել ռեզերվային վաշտ, որի պատճառով 12 տղաներ առանձնացան, նրանց թվում՝ Ժորան, Մանվելը, Սամվելը և որոշեցին ստեղծել նոր ջոկատ, որը կրելու էր «Հայ ճամփա» անվանումը, սակայն...

Սամվելը չբաժանվեց «Ուրարտուի»-ի համազգեստից, նա այլ խորհուրդ էր տեսնում այդ հագուստի մեջ:

Սամվելը առաջին անհրաժեշտության իրեր և սննդամթերք էր փոխադրում Ղարաբաղ, Գորիս: Ձենքն այդ ձեռք բերելով «պայքարով և զոհողությամբ»:

Ձմեռ էր, երբ մի քանի հայրենանվեր ընկերներ տվեցին իրենց ֆիդայական երդումը՝ Ձարդի ձորում և մեկնեցին Գորիս: Երդման հետ մեկտեղ Սամվելն իր հետ տարավ Մանիկ տատի խորհուրդը: Նա խոսում էր որպես հերոս և ոչ միայն խոսում. նրա կռիվը դեմ առ դեմ էր, իսկ շուրթերին՝ պայքարի ոգեկոչման երգը.

«Հայ քաջեր, հայ քաջեր՝
Ժամն է մեր օրհասական,
Հայ կամավորների խմբով
Պի՛տ արշավենք Հայաստան»:

Ամբողջ ձմեռ նրանք պաշտպանում էին Գորիսի շրջանի Խնածախ և Խոզնավար գյուղերը, սակայն հիմնական հարձակումը եղել է Կոռնիձորի վրա: Դրությունը վերոհիշյալ գյուղերում առաջին ամսվա ընթացքում որոշակիորեն հանգիստ է եղել՝ հեռու արտաքին հարձակումներից, բայց առկա է եղել ներքին պայքարը՝ տարաձայնություններն այդ գյուղերը պաշտպանողների միջև: Հիմնական խնդիրը՝ գիշերը գյուղը հսկելն էր թալանից: Վիճակն ավելի էր ծանրանում ցուրտ օրերին, տաք հագուստ չունենալու պատճառով:

Մի օր երեկոյան հայ հովիվներից մեկը կապվելով տղաների հետ հաղորդեց նրանց, որ հարևան հոտին զինված թուրքեր են մոտենում: Տղաներն անմիջապես դիմեցին հեռադիտակի օգնությանը: Զգալով, որ նույնիսկ վազելը իրենց չի կարող օգնել, որոշեցին կրակել, բայց ապարդյուն, իսկ հեռադիտակը չար կախարդի նման մի պատմություն էր նկարահանում, որ թուրքերը մոտենալով հոտին, զրուցեցին հովվի հետ, ապա 15 ոչխար հոտից առանձնացնելով՝ հանգիստ հեռացան, հովվին «դժգոհ չթողնելով» ...

Այս տեսարանը տեսնելուց հետո Սամվելը երկար ժամանակ չէր խոսում ոչ մեկի հետ, ինքն իր մեջ հետևում էր իր բախվող մտքերի ընթացքին. «Ինչու՞ են իրենք այստեղ, և ու՞մ համար են այստեղ, և ինչու՞ պիտի լինի այսպիսի հայ հովիվ»:

Սամվելը Գորիսից հետ վերադարձավ 1991թ. գարնանը, երբ գյուղն արդեն ուներ իր պահապանը՝ ներքին գործերի ռուսական բանակը, որը ոչ հեռու անցյալում ղեկավարում էր ադրբեջանցիների մարտերը:

Սակայն նա չէր հանգստանում և պահ էր փնտրում Արցախ մեկնելու համար:

Գյումրիից մեկնող ջոկատը մի քանի անգամ հետ ու առաջ արվեց, և դեռ պարզ չէր, թե ե՞րբ են գնալու: Վերջին անգամ Սամվելը Երևանում մնաց և մի շաբաթ անց մեկնեց Արցախ՝ միանալով Գագիկի ջոկատին. «Որոշել եմ, պիտի գնամ, իմ կռիվը թուրքի հետ առանձին է»:

Նախօրոք «ներքուստ» գիտեր, որ շուտ է զոհվելու և քույրերին նախապատրաստում էր իր մահվան: Համոզում և

հասկացնում էր, որ անհրաժեշտության դեպքում պետք է զոհաբերել նաև կյանքը: Նա գնաց այլևս հետ չգալու «մտադրությամբ», որոշեց նկարվել և...

«Պահիր քույր իմ, այս նկարը մահվանս օրվա համար է»,և քույրը պահեց...

Քույրը գիտեր, որ Սամվելի յուրաքանչյուր խոսք դառնալու է իրականություն: Ոչ բոլորն են գիտակցաբար մահվան գնում, բայց նա գնաց...

Դեռևս ինքնաթիռի միջից տեսնելով Արցախը, Սամվելի հոգում վրիժառության մոխիրը սկսեց բոցեր արձակել և տեղ հասնելուն պես ծնկի իջնելով՝ ֆիդային համբուրեց արդեն իսկ իր արցունքներով թրջված հողը:

Արցախը անդնդախոր ձորերի և գեղատեսիլ հովիտների մի սքանչելի աշխարհ է, անտառապատ երկիր, իսկ Հադրութի շրջանը՝ առավել ևս:

Ջոկատի տղաները շաբաթվա մեջ ընդամենը մեկ օր էին տեսնում Սամվելին, սպանվող ազերիների լուրը Սամվելից շուտ էր ջոկատ հասնում...

Հաճախ էր Սամվելը պայքարի մեջ մտնում սպիտակ ձիով, որի ականջներից մեկը կտրված էր... թուրքի ձի էր:

Միայնակ պայքարի դուրս գալու համբավն էր, որի համար Սամվելը ստացավ «Միայնակ Գայլ» մականունը:

Ինքն էր իր հույսի շտեմարանը: Հույսը գործի կեսն է, քայլը՝ սկիզբը, դրանց շաղկապումը՝ հերոսական ընթացք:

Զարմանալին այն էր, որ Սամվելը օրը ցերեկով կարող էր մտնել ցանկացած թուրքական բնակավայր և սուլելով դուրս գալ այնտեղից, ինչպիսի՞ ահ ու սարսափ կարող էր նա տարածել, որ հրացանի փողն անգամ շեղվեր այդ ուժից, իսկ որ ճանապարհով որ նա անցնում էր, հաստատ թողնում էր իր խորհրդանիշը՝ «Միայնակ գայլ»-ի հետքը: Երբ օրերով նա ջոկատի հետ չէր, ազերիները չէին զգում այդ, քանզի տղաները գիտեին Սամվելի մականվան նշանաբանը՝ դա գայլի կաղկանձով թշնամուն դիմավորելն էր: Նույնիսկ զրահամեքենաներն էին այդ ձայնի հզորությունից «շեղում» իրենց ճանապարհը:

Լեգե՞նդ է...

Ես հավատում եմ լեգենդներին, և ինչպե՞ս չհավատամ, երբ լսում եմ իմ ականջներով և Սամվելի հետ կռվող հայորդիների բերաններից, երբ հայ ջոկատի տղաները մտնելով Տող թուրքական բնակավայրը, ամենևին էլ չեն զարմացել, որ իրենց դիմավորել է Սամվելը՝ Տող գյուղի եկեղեցու վրայից թշնամու դրոշը իջեցնելով: Դա 1991թ. հոկտեմբերի 31-ն էր և ազատագրվեց և՛ս մի բուռ հայկական հող:

Ո՛չ մի թիզ հող -
չի մնա ազերուն
Ո՛չ մի կաթիլ հայի արյուն -
չի՛ թափվի ազերու հողին:
Չի՛ ժպտա ալլահը նրա -
Քանի հայի աստվածը կա,
Չի՛ սպիանա մեղքը նրա -
Քանի դեռ ծովից-ծով Հայաստան չկա:

Մանիկ տատի խոսքերը երբե՛ք հանգիստ չեն տվել Սամվելին, հետապնդել են նրան, պարտադրել...

«Որդիս թուրքի ցանկասիրությունը չհանդուրժես, որ այստեղ ի՛մ սիրտը հովանա, իսկ այնտեղ՝ հայոց անթաղ ոսկորներն իմանա՛ն»:

Սամվել Խաչատրյանը սպանել է ... իսկ երբ փամփուշտ չի ունեցել, նունչակիներն են անցել նրան օգնության և մի անպատասխան ճշմարտություն.

· «Սա միայն արցախյան վրեժ չէ, սա Մուշու՛մ, Սասունու՛մ, Վանու՛մ մորթվածների որդոց վրեժն է, իսկ դուք պատմողներ չպե՛տք է ունենաք»:

Ո՞րը պատմել...

Երբ հայի ստինքներն են,
որպես թագբեհ,
Դարձել զբաղմունք շուն թուրքի ձեռքին,
- - - - - - - - - - - - - - - - - -
Երբ հայոց կույսերն էին
պղծվում իրենց հողում,

- - - - - - - - - - - - - - - - - -

Այո, իմ հայորդի:
Դու կրկին եկար
Եկար լվանալու՛ հողդ արյունոտ,
Եկար՝ քո պատիվը պաշտպանելու:

Եվ ինչպե՞ս Սամվելը չվառեր գյուղեր, երբ հայ աղջնակին պղծված տեսավ, ինչպե՞ս չսպաներ հրեշ ազերուն, երբ փոքրիկ հայուհուն կախված տեսավ:

Եվ ո՞վ կարող է...

Իսկ ես, որ ականատեսը չեմ եղել քո վրիժառության, այլ միայն լսել եմ կատարածիդ արձագանքները, հաճախ ինքս ինձ հարց եմ տալիս, ի սկզբանե՞ էիր վրիժառու, թե՞ ...

1991 նոյեմբերի 7-ի առավոտյան ժամը 7-ն էր: Խրմանջուղ գյուղի մատույցներում ընդամենը չորսով էին՝ Սամվելը, Խաչիկը և երկու տեղաբնակներ՝ Մարտիկն ու Վարդանը:

200 ազերիներ «իրենց արդեն չճանաչելով» գրոհի անցան: Կրակ էր տեղում գնդացրից, իսկ մեր տղաները նույնիսկ փամփուշտ չունեին: Սամվելը, ինչպես միշտ՝ մարտական երգը շուրթերին, ինքնաձիգով, անցավ հակագրոհի:

Նրա թիկունքում էր երևանցի Խաչիկը, որի աչքերի առաջ, աչքեր չունեցող գնդակը խլեց Սամվելի երազանքը, և լռեց նրա երգը: «Իսկական ֆիդային պետք է զոհվի գլխից՝ երգը շուրթերին, նա ո՛չ տուն պետք է ունենա, ո՛չ ընտանիք, ո՛չ էլ գերեզման»:

Սամվելի ծնողները՝ Սերյոժա և Գեղեցիկ Խաչատրյանները

Իսկական ֆիդայու երազանքը անկատար չի մնա...

Խաչիկը դուրս բերելով Սամվելին կրակագծից հանձնեց օգնության հասնող Վարդանին և ինքնաձիգով սկսեց պաշտպանվել, բայց կրկին ... արդեն երկրորդ զոհը նույն բարձունքի վրա, իսկ Վարդանը ջանում էր փրկել նրանց դիակները:

Ազերիները շրջապատեցին տարածքը, այլևս ո՛չ մի հույս, որ կփրկվեն նրանց դիակները՝ բարբարոսների ձեռքից:

Մնում էր փրկել թիկունքում գտնվող բազմամարդ Խրմանջուղը: Մարտիկը հասցրեց զգուշացնել գյուղի բնակչությանը: Մարդիկ փրկվեցին, բայց գյուղը հրդեհվեց նրանց աչքերի առաջ:

Չբավականանալով կատարվածով՝ արնախում ազերին տղաների մարմինները կապեց զրահամեքենայից և քաշելով տարավ:

Խոշտանգվեցին երկու գլխատված դիակ. մեկը՝ «Ուրարտու» ջոկատի համազգեստով՝ Սամվելն էր, մյուսը՝ ո՞վ գիտե... ոչ հավաստի տվյալներով՝ Խաչիկը:

Իսկ որտե՞ղ է Վարդանը...

Խոշտանգվեցին, բայց էլի չհանգստացավ շների ոհմակը և սկսեց ծղոտներով պատել նրանց ու... միայն հավերժացող կրակը ստիպեց նրանց հանգստանալ: Անգամ Սամվելի այրվող մարմինը նրանց մահու չափ արհամարհում էր...:



Բարու ձեռքով, չարի զարկով ...
Աստծո կամքով ընկերացանք

[illegible]

[illegible]

[illegible]

СВИДЕТЕЛЬСТВО О СМЕРТИ

II-СЛ № 431607

МУ Минсоц. 1988. Армянский яз.

«ԵՐԴՈՒՄ»

Հերոս՝ Սամվել Խաչատրյանի հիշատակին
Խոսք՝ Հովի. Առաքելյանի
Երաժ. Աշոտ Մինասյանի



1. Երդվում ենք բարձր պահել անունը՝
   Մեր հայ քաջորդու՝ Խաչատրյանի,
   Որին ուղեկցող անմահությունը՝
   Անմահությունն է իմ Հայաստանի:
2. Հայասեր լինել՝ մանուկ հասակից,
   Քո օրինակով հայրենին սիրել,
   Թույլին ու որբին լինել կարեկից,
   Եվ հայրենիքին անմահ նվիրվել:
3. Քո հիշատակը չի՛ խամրի երբեք,
   Հերոս, քո հետքով մի՛շտ ենք քայլելու,
   Արցախի արծիվ ենք դառնալու մենք,
   Քո օրինակով՝ սխրանք գործելու:

ՁՈՒՎԱԾ, ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ՁԻՆՎՈՐԻ ՍՈՐ ԵՐԳԸ

ՍԱՄՎԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



1. Ղարաբաղի ո՞ր ձորերով գնացիր,
   Ճամփաներով արյունլվա, արցունքոտ,
   Ո՞ր սարերով, ո՞ր գյուղերով դու անցար,
   Սիրուն բալես, ձեռքես թռար, գնացիր:
2. Ղարաբաղի մայրերի պես ես մոլոր,
   Միշտ կնայեմ ճամփաներին հեռավոր,
   Քաջ ֆիդայուց կհարցնեմ մեկ խաբար,
   Սիրուն բալես, ձեռքես թռար, գնացիր:
3. Ղարաբաղում միայնակ գայլ մնացիր,
   Գիտե՛մ, բալես, հայրենիքին զոհվեցիր,
   Լացս տեսնես՝ չնեղանաս, մոր սիրտ է,
   Սիրուն բալես, ձեռքես թռար, գնացիր:

ԿԱՐԻՆԷ ՌԱՖԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ԿԱՐԻՆԷ ՇԻՐԱԿ)
ՄԻԱՅՆԱԿ ԳԱՅԼ («Երդվյալ անմահներ» շարքից, գիրք 1)

КАРИНЭ РАФИКОВНА МАНУКЯН
(КАРИНЭ ШИРАК)
ОДИНОКИЙ ВОЛК
(на армянском языке)
Гюмри, "Дпир", 1997

Խմբագիր՝ Հ. Ֆ. Կարապետյան
Նկարիչ՝ Գևոր Փուշ
Գեղ. խմբագիր՝ Ս.Ա. Դրմեյան
Տեխ.խմբագիր՝ Հ.Հ.Հակոբյան
Վերստուգիչ սրբագրիչ՝ Ա.Շիրազունի

Հանձնված է շարվածքի 07.03.97թ.:
Ստորագրված է տպագրության 28.05.97:
Չափսերը՝ 60X84 1/16: Թուղթ՝ օֆսեթ N1:
Տառատեսակ՝ Arial Armenian: Տպագրություն՝ օֆսեթ, 1,52 պայմ. տպագր. մամուլ, 1,16 հրատ. մամուլ: Տպաքանակ՝ 3000: Պատվեր՝ 465:

«Դպիր» հրատարակչություն, Գյումրի, Գ.Նժդեհի 7:
ՀՀ տեղեկատվության նախարարության Գյումրիի տպարան, Մ.Մկրտչյանի 47: